ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Վահագն Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեի վերլուծություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Դավթյան

Հակոբ Օշականի անվան թիվ 172 դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... - 3 -
ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ «ԱՆԽՈՐԱԳԻՐ» ՎԻՊԱԿԸ ..... - 4 -
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... - 14 -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկար մտորումներից հետո ես ընտրեցի Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակի վերլուծությունը, որովհետև այն քիչ է ուսումնասիրված։ Այն իր բնույթով անմիջականորեն շարունակում է Գ. Մահարու, Վ. Թոթովենցի և մյուսների ինքնապատումների ավանդույթները։ Եվ քանի որ Վ. Դավթյանի ստեղծագործությունները շատ քիչ են ներկայացված դասագրքերում, իսկ դրանք ակնհայտորեն արժանի են դպրոցում ուսումնասիրության, որովհետև մեծ բանաստեղծի ստեղծագործությունները աշակերտներին կմղեն հայրենասիրության, ազնվության, իսկ նրա պաշտամունքը մայրենիի հանդեպ կփոխանցվի աշակերտներին։

Վ. Դավթյանը գրեց «Անխորագիր» վիպակն ու հավերժացրեց Արաբկիրը այնպես, ինչպես Մահարին Վանը, Թոթովենցը Մեզիրեն, Վարուժանը Բրգնիքը, Մեծարենցը Բինկյանը, Համաստեղը Փերչենճը, Մնձուրին Արմտանը…

Հիրավի դասագրքերում զետեղելու ստեղծագործություն, որ շատ բան է սովորեցնում մեզ։

Այն քիչ է ուսումնասիրված, բայց շատ հետաքրքիր և բարձրարժեք է, գրված է մաքրամաքուր հայերենով, ճոխ բառապաշարով, ազատ շարադրանքով։

Կորցրած հայրենիքի պաշտամունքն ու կարոտը, հայրենիքի նկատմամբ սերը աշակերտների մեջ կարթնացնեն հայրենասիրական զգացմունքներ։

Նպատակս մեկն է՝ որ այն մտնի դասագրքերի մեջ, ուսումնասիրվի և մատուցվի աշակերտներին։

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ «ԱՆԽՈՐԱԳԻՐ» ՎԻՊԱԿԸ

Ծնված լինելով Արաբկիրից գաղթած նահապետական ընտանիքում՝ ամբողջ մանկության և պատանեկության տարիներին լսել եմ զանազան պատմություններ Արաբկիրի, այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների մասին և՛ տատիկից, և՛ ծնողներից։ Եվ ինձ այնպես էր թվում, կարծես ես այդ ամենի մասնակիցն եմ։ Միշտ պատկերացրել եմ Հին Արաբկիրը, իմ պատանեկան տունը, որը եղել է Արաբկիրի եկեղեցուն մոտ (կառուցված է եղել Անիի Մայր տաճարի օրինակով), մեր պարտեզի կապույտ յասամանները, արցունքի պես վճիտ Ոսկեգետակը, բարդիների կանաչ օրորը, Կապույտ դարը, որտեղից բերել են կապույտ կավը, մաքոքների և ջահրաների միալար երգը, քարե տունը, որի պատերը հնությունից փայլել են, հաստաբուն ու զորեղ թթենիները, ռունգերիս մեջ զգացել եմ թխվող սաջի հացի զգլխիչ բույրը։

Արաբկիրցիների նիստուկացը, որը երկար տարիներ դեռ շարունակվեց այստեղ՝ Նոր Արաբկիրում, ինձ միշտ հիացմունք է պատճառել, որովհետև հարևանություն և հարազատություն անել գիտեին, համեղ ճաշատեսակներով իրար հյուրասիրել

գիտեին, բոլոր արաբկիրցիները կարծես իրար հարազատներ լինեին՝ ի տարբերություն մերօրյա չորուցամաք կյանքի։

Հարյուր անգամ էլ եթե կարդամ այս հիասքանչ վիպակը, ինձ թվում է, թե առաջին անգամ եմ կարդում (անգիր իմանալով բոլոր պատմությունները)։ Առանց արցունքի և ժպիտի չեմ կարողանում կարդալ։ Ի՞նչ ափսոս, որ իմ սերունդից հետո ոչ ոք չի հասկանալու և իմանալու Արաբկիրի երգեցիկ բարբառը, տունը չի լցվելու Արաբկիրի ճաշատեսակների անկրկնելի բույրով։ Լավ է, որ այս վիպակով շատ բան անմահացավ։

«Անխորագիրը» եկավ լրացնելու իմ շատ սիրելի Մահարու և Թոթովենցի աննման վիպակները։ Իմ ծանոթներից շատ կարդացած ու բանիմաց մի կին ասաց, որ երբ ընթերցում էր «Անխորագիրը», ափսոսում էր, որ պիտի վերջանա, և քիչ-քիչ էր կարդում , որ հաճույքը երկարաձգվի։ Ասաց, որ այս վիպակը նման է քաղցրավեհինքի, ափսոսում ես, որ հաճելին վերջանում է։ Իսկապես դասագրքերում զետեղելու շատ ուսանելի, դաստիարակիչ, ազնվացնող հատվածներ կան վիպակում։



Ուրեմն մեկ անգամ էլ վերադառնանք Հին Արաբկիր, որը այդպես էլ երազ, մորմոք, տանջող կարոտ և անհասանելի մնաց մեծ բանաստեղծի համար։

«Անխորագիր» ինքնակենսագրական վիպակը (Դավթյանն այն բնորոշել է հուշագրություն-էսսե) ընթերցողին է ներկայացվել նրա մահից տարիներ անց։

Վիպակը գրվել է 1984-ին, բայց հեղինակը չի ցանկացել տպագրել, որովհետև կան հերոսներ (բացասական), ովքեր դեռ կենդանի էին և կարող էին իրենք իրենց ճանաչել, իսկ դա երևի հեղինակի համար ցանկալի չէր։ Վիպակը լույս տեսավ 2003-ին։ Որպեսզի ավելի լավ հասկանանք և գնահատենք, ծանոթանանք հեղինակի կենսագրությանը։ Դավթյանը ծնվել է 1922-ին Արևմտյան Հայաստանի Արաբկիր գյուղաքաղաքում։ Հայրը՝ Արմենակը, Էրզրումցի էր՝ ծնվել էր Կարինի Ձիթող գյուղում։ Հրաշքով փրկվելով եղեռնից՝ հայտնվում է Արաբկիրում և ամուսնանում Բոյաջյան Դուդուի հետ։ Ծնվում են նրանց երկու զավակները՝ Պերճուհին և Վահագնը։ Դավթյանը Արաբկիրում ապրեց ընդամենը չորս տարի։ Եվ ահա չորս տարեկան երեխայի հիշողությունները, ապրումները կան այս վիպակում։ 1926-ին նրանց ընտանիքը թողեց Եփրատի վտակ Ոսկեգետակի ափին սփռված Արաբկիրը և գաղթեց Հայաստան։

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց
Եվ բուրում էր իբրև գարնան հող ու ցել…

Եվ մնացել է առաջին ագամ
Աշխարհում տեսած իմ աղբյուրն այն ջինջ,
Որից զրնգուն ու անապական
Եվ որից պայծառ չտեսա ոչինչ

Եվ մնացել է լուսեղեն մի ամպ,
Եվ մնացել է այնպիսի մի ձյուն,
Որ իր բարությամբ ու արդարությամբ
Նման էր այնպես մանկության աստծուն։

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Երկինք ու բարդի, ճառագայթ ու լաց,
Իմ հողի հոտն է այնտեղ մնացել…

«Անխորագիր» վիպակով Դավթյանը հավերժացրեց Արաբկիրը։ Պատմելու շատ հետաքրքիր ձև է գտել, որպեսզի կապի հինը և նորը։ Բանաստեղծն արվեստագետների մի խմբի հետ թռչում է ԱՄՆ։ Թռիչքի ժամանակ հիշողությունները նրան տանում են ծննդավայր։ ԱՄՆ-ում են ապրում նրա ազգականները, որոնց հանդիպելու սպասումով է ոգևորված։ Ազգականների մեջ է նաև նրա քեռու որդին՝ Մկրտիչը՝ պապի անունով մկրտված, ով ապրում է Ֆիլադելֆիայում։ Նրան հանդիպելու ոգևորությունը գրողին զցում է հիշողությունների գիրկը։ Տարբեր հիշողություններից (երիտասարդության տարիներ, պատերազմական օրեր…) հետո մանկության ինչ-որ կտրատված պատկերներ են բարձրանում աչքերի դեմ։ Լսում է տատի ձայնը, ենթագիտակցության ծալքերից հասնում են մանկության բույրերն ու ձայները։ Պատմություններ է հիշում։ Առաջին բանը, որ հիշում է (կամ պատմել է մայրը, ու հետո այնպես է թվացել, որ հենց ինքն է հիշում) տանիքից իր ընկնելն է ներքևում դրված կճուճների վրա։ Եվ այդ փոքրիկ պատմությունների միջոցով վեր է հանում Ոսկեգետակի ափին ծվարած Արաբկիրի սովորությունները, ժողովրդի կենցաղը, մարդկային հարաբերությունները, նույնիսկ կերակրատեսակներ պատրաստելու ձևերը, մանկության համեր, բույրեր, որոնք անփոխարինելի մնացին ամբողջ կյանքում։ Սա եզակի մի ստեղծագործություն է, որ հավերժացրեց կորած երկրի սովորությունները, համերն ու բույրերը։ Հիմա արդեն, երբ սերնդափոխություն է կատարվել, և Երևանում չի ապրում Հին Արաբկիրում ծնված ոչ ոք (վերջին արաբկիրցին վերջերս մահացավ), ապրում են Արաբկիրից գաղթածների զավակները, թոռներն ու ծոռները, շատ փոքրաթիվ ընտանիքներում է, որ պահպանվել են այդ սովորույթներն ու նիստուկացը, ճաշատեսակները։ Շատ հետաքրքիր ձևով՝ ձեռքն ընկած մի նամակի միջոցով (նամակ, որ գրել է արաբկիրցի մի մայր Ամերիկա պանդխտած որդուն) հեղինակը Արաբկիրի անկրկնելի բարբառով հավերժացրել է արաբկիրցիների նիստուկացը, սովորությունները, կերակուրների անունները՝ մխիշարի փիլավ, ղաբասպաստի, ցամքփոց, պլտիկի տոլմա, տերևջուր, սևուկապուր, պումբար, հավկիթջուր, տապկոց, թարխանաշորվա, հասուրդա։



Բանաստեղծը քարտեզի վրա ցույց է տալիս իր ծննդավայր Արաբկիրը։

Այս ամենին զուգահեռ հայտնվում է Մնձուրին։ Եվ զրուցում են արմտանցի և արաբկիրցի գրողները։ Նրանց զրույցից նույնպես ծնունդ են առնում պատմական փաստեր, հետաքրքրական պատմություններ՝ համեմված հումորով, արաբկիրյան բարբառով, երգերով, որոնք մնացել են գրողի հիշողության մեջ դեռ մանկուց։

Աղջիկն իջեր է, պախչան է պառկեր,

Հովիկն էսմիշ ըրեր, ծոցիկնէ բացեր,

Երնեկ այն կտրիճի՝ քո ծոցն է պառկեր,

Քո ծոցուդ պառկողին սիրուն երնե՞կ տամ…

Երանելի օրեր, ժամանակներ։ Այդպես է եղել։ Բայց այդպես է եղել Մեծ եղեռնից առաջ։ Հետո Մկրտիչ պապի խողխողվելու պատմությունն է ցորենի գուբի մեջ։ Կարմրած ցորեն… Ողբերգություն։ Մորթված պապ, ով ընդամենը երեսուն տարեկան էր և թողել էր զույգ զավակներ, որոնցից մեկը պիտի դառնար բանաստեղծի մայրը, մյուսը՝ քեռին։ Եվ ահա այդ քեռու որդին է, ում պիտի հանդիպի Ֆիլադելֆիայում։

Հետո գաղթ։ Լքված տուն, որը շատ սիրելի էր բանաստեղծին։ Հին, շատ տխուր և գեղեցիկ տուն։ Քանի՞ սերունդ է խաղացել նրա հարկի տակ, քարե պատերի մեջ։ Ահա այս տունն են թողնում, և ցավը շատ մեծ է, անկշռելի։

Եվ այս ընթացքում արվում են պատմություններ Կապույտ դարի, յասամանների, Երմոնյա տատի մասին։ Եվ այդ կապույտը, որը շատ նյութական էր և հակադրվում է

Նոր Արաբկիրի դեռևս անջուր և գորշ պատկերներին։ Նախքան գաղթելը տանը մեծ վեճ ու զրույց է եղել.ու՞ր գնալ՝ Ամերիկա՞, որտեղ էր քեռին՝ Աբրահամը (Մկրտիչի հայրը), թե Ռուսաստան, որտեղ էր հորեղբայրը՝ Հովհաննեսը։ Հաղթել է հայրը (մեծ գերդաստանից փրկվել էին միայն երկու եղբայր), և ճանապարհ են ընկել դեպի Ռուսաստան, այնուհետև՝ Հայաստան։

Կրասնոդար։ Կտրուկ փոխված կենցաղ, ռուսական միջավայր, պեպենոտ Յաշա, որ իրիս է վաճառում, ոսկեվարս Ֆրոսյա, փողով ջուր… և կարոտ, շա՜տ մեծ կարոտ։ Նորից հիշողություններ, և շատ դրամատիկ ու գեղեցիկ պատմություն հորաքրոջ ընտանիքի մասին։ Գաբրիել աղայի պատմությունը։ Թուրք Նեյման՝ հուրի-փերի, որ հետո մկրտվեց Արաքսի և դարձավ բանաստեղծի հորաքույրը։

Նորից կրասնոդարյան պատկերներ, հիշողություններ, գրքույկով հաց, սով, ընտանիքը լքած հայր, միամիտ մայր, և Նոր Արաբկիր գնալու մեծ ցանկություն։

Կրասնոդարից Երևան են գալիս թալանված, որովհետև նրանց նէպման էին կնքել և բռնագրավել ունեցվածքը։ Ու երբ Երևանի կայարանից ֆայտոնով հասնում են Նոր Արաբկիր, հարցուփորձով գտնում են իրենց ծանոթներից մեկի տունը և իջնում այնտեղ։ Սառը և վատ ընդունելություն, երկու երեխաների ձեռքը բռնած՝ մայրը հայտնվում է փողոցում։ Բարի մարդիկ նրանց ապաստան են տալիս, օրերով, շաբաթներով պահում… Սով էր։ Երևանյան տարիներ, սիրահարություն, գեցեցիկ պատմություններ, հին արաբկիրցիներ, Հրազդանի ձոր։ Պատմություն պատմության ետևից։ Թվում է՝ իրար հետ կապված չեն, որովհետև Հին ու Նոր Արաբկիրների պատմություններ, հիշողություններ, զրույցներ Մնձուրու հետ Հրանտ Մաթևոսյանի մասին, որտեղից որտեղ հայտնված Սահյանը, հիշողություններ Մահարու, Սևակի մասին։ Բայց այս պատմություններն ու հիշողությունները այնքան նրբորեն են իրար հետ կապված, որ ստեղծում են մի ամուր և կուռ դիպաշար։ Չնայած հեղինակը ներողություն է խնդրում ընթերցողից, որ «հուշերս այսպես վայրիվերո են», բայց հենց այդ «վայրիվերությունն» է ավելի գեղեցիկ դարձնում և կարևորում առանցքային, հիմնական հիշողությունը։

Նոր Արաբկիր… Ընկերներ, ծանոթներ, հարևաններ, որոնք համարյա հարազատի, բարեկամի, ազգականի նման էին։ Պատմություններ, ինչպես Սարոյանն է ասում՝ «պզտիկ պատմություններ»՝ մեկը մեկից հուզիչ, սրտառուչ, որոնք և՛ արցունք, և՛ ժպիտ են պարգևում։



Շատ հետաքրքրքական է բանակ գնալու, գնացքի, գնացքից ետ մնալու պատմությունը։ Բայց ամենագեղեցիկը գնացքում նամակ գրելու պահն է։ Այսպես ասած մի «գողական հեղինակության» համար նրա սիրած աղջկան նամակ գրելու

պատմություն։ Նամակ, որ արցունք է բերում «գողականի» աչքերից, բարձրացնում երիտասարդ գրողի հեղինակությունը, արտագրվում՝ աղջկա անունը փոխելով։ Սիրահարված բանաստեղծի զգացմունքը նույնն է, ինչ «գողականինը», նրա ընկերներինը։ Հիշողություններ, հիշողություններ… Բայց իրական կյանքում Դավթյանն արդեն Ամերիկայում է, ամերիկյան բարքերի մեջ, ամերիկյան արհեստական՝ սինթետիկ կանաչի մեջ, և կարոտ հայրենիքի, հայրենի բնական կանաչին։ Հետո հանդիպում հարազատների՝ մորաքրոջ զավակների հետ։ Բայց Մկրտիչը՝ քեռու որդին, որը հիմա Ջոնի է դարձել, չկա, չի եկել։ Մորաքրոջ աղջիկը մեղավորի պես ասում է, որ «ան հոս ծնված ու մեծացած է, Արաբկիրի ջուր չէ խմած, Արաբկիրի հաց չէ կերած, ոտոնց սիրտը քիչ մը ուրիշ տեսակ է…»։ Ուրիշ, շատ ուրիշ, անտարբեր, սառը… Բանաստեղծը շա՞տ ծանր է տանում նրա «քիչ մը պաղ առած» անտարբերությունը։ Իսկ հայրենիքում կան սրտացավ մարդիկ, ինքը կվերադառնա, կգնա Վերին Սասնաշեն, կհանդիպի Գևորգ Հակոբյանին, կզրուցեն, կգրկեն իրար, կհասկանան իրար։ Սա հայրենիքի ոգին է, կարոտը, կորցրած հայրենիքի կարոտը, որը ծնում է «Քելե լաո»-ի նման երգեր։

Ուրեմն հայի հայրենիքը Հայաստանն է։ Ուրեմն հոր ընտրությունը՝ դեպի Հայաստան, ճիշտ էր ժամանակին։

«Անխորագիր» վիպակը բարձրարժեք ստեղծագործություն է։ Մի շնչով կարդացվող, ուսանելի, չափազանց բարի։ Այն աննկատ հայրենասիրություն է ներարկում երակներիդ մեջ։ Թվում է՝ բանաստեղծի միտքը թափառում է ժամանակի մեջ Հին Արաբկիրից Կրասնոդար, Երևան, Նյու Յորք ու Ֆիլադելֆիա, բայց բոլոր պատմություններն այնքան փոխկապակցված են, որ դառնում են անբաժանելի միասնություն։ Բանաստեղծի արձակը ավելի գեղեցիկ է, ավելի հուզառատ, որովհետև նման է բանաստեղծության, բայց ավելի ազատ։

Ինչպես գրականագետ Դավիթ Գասպարյանն է գրել. «Հիշենք Չարենցի արձակը, Մահարու արձակը։ Դավթյանի այս վիպակը այդ շարքի մեջ է»։

Վ. Դավթյանը հավերժացրեց Արաբկիրը ոչ միայն արաբկիրցիների սերունդների համար, այլ Արևմտյան Հայաստանից բոլոր գաղթածների զավակների, թոռների, ծոռների համար։

Ուրեմն թող ղողանջեն տունդարձի զանգերը։

Թե հրաշքով ճամփաս տանի
Դեպի Եփրատ ու մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
Հայրենական փոքրիկ իմ տուն։

Այն կապույտից ու այն ոսկուց,
Որ ջրերն էին թառում,
Կճանաչեմ ու կգտնեմ
Իմ մանկության ոսկե առուն։


ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
ԱՆԽՈՐԱԳԻՐ
ՎԻՊԱԿ-ԷՍՍԵ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
ВАГН ДАВТЯН
ԾՆԻՎՔԻՍ
МОЯ
МАЛАЯ
РОДИНА

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Անխորագիր» վիպակը գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություն է։ Ժամանակակից արձակ՝ ժամանակակից մտածողության տիպաբանությամբ։ Շատ բան սովորեցնող, դաստիարակող, մարդկային ճիշտ հարաբերություններ կրթող ստեղծագործություն է այս վիպակը։ Դասագրքերում պետք է զետեղվի ոչ միայն Դավթյանի արձակը, այլև նրա պոեզիան, որովհետև նա առաջին հերթին բանաստեղծ է, մեծ բանաստեղծ։

Էդուարդ Մեժելայտիսը, ով թարգմանել է Վ. Դավթյանին, գրում է. «Ես սիրում եմ Վ. Դավթյանի պոեզիան, որը, իսկապես «մաքրում է արյունը» մարդկային երակների մեջ արևի լույս է ներարկում, մարդուն դարձնում ավելի ազնիվ, ավելի լավ, հանում է մինչև Արարատի բարձունքները»։ Ուրեմն ինչու աշակերտներին զրկենք այս մեծ բանաստեղծի ստեղծագործություններն ուսումնասիրելուց։ «Համառոտ պատմություն հայոց» և նրա «Անխորագիր» էսսեն պետք է դառնան այսօրվա աշակերտի անբաժան ուղեկիցները։

Ըստ խստապահանջ բանաստեղծ Վ. Դավթյանի՝ մարդու կյանքը խորագիր չունի, բայց մենք՝ հայ գրականության ծրագրերի ճակատագրով մտահոգ ուսուցիչներս, ուզում ենք, որ մեր գրականության դասագրքերում լինի խորագիր և այդ խորագիրը լինի Վահագն Դավթյան։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավիթ Գասպարյան «Վահագն Դավթյան կյանքը և ստեղծագործությունը», Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2007թ., էջ 301-310,
2. Գրիգոր Ջանիկյան «Անխորագիր» վիպակի առաջաբան, Երևան, 2003թ., էջ 3-4։